

# ԱԶԳԱՅԻՆՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆԸ

Պատահարս չէ որ հայ գիրերու գիւտի 1500 եւ հայ ազգայութեան 400 ամեակները իրարու կը դիպին: Պատահական ըլլալէ աւելի այդ երկու տօներու միացումը կ'ապացուցանէ պատմական ճշմարտութիւն մը:

1500 տարի առաջ հայ ազգային միաքն էր որ կըստեղծագործէր զուտ ազգային հարստութիւն մը—Հայ Գիրը: 400 տարի առաջ դարձեալ հայ միաքն էր, որ այս անգամ ոչ թէ կ'ըստեղծէր, այլ համաշխարհային միաքի բարիքներէն կ'ապահովէր հայ Ազգի բաժինը: Ու հայ ազգային ստեղծագործութիւնը կ'երթար, կը զուգակցէր համաշխարհային միաքի ստեղծագործութեան հետ, պարտատեղու համար այսօրուան հայ գրականութիւնը:

Պատահական չէ այս երկու տօներու զուգադիպութիւնը: Ազգային միաքի եւ համաշխարհային միաքի նուիրական եղբայրութիւնն է ստիկա: Ազգայինի եւ միջազգայինի սերտ զուգակցութիւնը:

Ու արդարեւ, ինչ պիտի ըլլար զի՛ճակը հայ գիրերուն, որոնք կերտուեցան 1500 տարի առաջ Մեսրոպեան հանձարին տակ: Ինչպէ՛ս պիտի կարողանային շարունակել անոնք իրենց գոյութիւնը, եւ բաւականութիւն սոյ նորանոր պահանջներուն, առանց միջազգային միաքի օժանդակութեան, առանց կիւլթիւնակրկեան մեքենային: Ազգային գիրերը պէտք ունէին միջազգային միաքի օգնութեան, ազգաբութեան արձևատին, որպէսզի կարողանային մեղի բերել այսօրուան հայ գրականութիւնը: Այլապէս ստիկա պիտի մնար սեփականութիւն կրկին ու վանքերուն միայն եւ ժողովարդը պիտի չկրնար տարցնել իր գոյութիւնը ազգային միաքի ճատազայիններուն տակ: Եւ դարձեալ ինչքան անշուք պիտի ըլլար միջազգայինը առանց Ճէյքըպիիներու, Տանթէներու, Գէօթէներու, Հիւզօնիներու, որոնք մէկ մէկ ազգային հանձարներ են: Ազգերն են որոնք պիտի ստեղծագործեն, եւ միջազգային միաքի գիւտերը պիտի գործանեն ազգերու ոգին ու ստեղծագործական կորովը:

Ազգայինի եւ միջազգայինի սերտ

յարաբերութեանց վրայ է հիմնուած նաեւ 2, 3. Գահակցութեան աշխարհահայեացքը ազգային հարցի մասին: Համաձայն այդ սկզբունքին՝ մենք ոչ կանգնած ենք միջազգային այս ծայրայեղ տեսակէտին վրայ որ կը մերժէ ազգերու գոյութիւնը եւ ազգը օրգիւնը կը համարէ պոլիթուական կարգերու որոնց օճչացումովը պիտի անհետանան հաւ ազգերը եւ ոչ ալ կը պաշտպանենք այն տեսակէտը, որ ազգային ըլլալէ աւելի ազգայնական է, չօվէն ու այլամերձ: Ազգայինն ու միջազգայինը իրարու ներձակ գաղափարներ չեն: Ընդհակառակը, մէկը առանց միւսի կը գտնուի անպատասխան, անհրապօք: Այդ երկու գաղափարները իրենց ուժն ու կորովը կը քաղեն իրարմէ: Արդարեւ ազգային գաղափարը կրնայ դարձանայ այն տանն միայն՝ երբ կը յենու միջազգային յառաջգիծութիւններուն վրայ, եւ միջազգայինն ալ իր կարգին այն տանն կրնայ ընդարձակիլ եւ բարձրանալ՝ երբ ամէն գիւրութիւն կուտայ ազգային ստեղծագործութեան:

Երկու ներդաշնակ գաղափարներ են ազգայինն ու միջազգայինը, որոնք պէտք է դարձանան կողք կողքի, զուգահեռաբար: Առաջինը արտայայտիչն է միաքինն ու սիրտին, երկրորդը միջոցն է անոնց ընդարձակմանն ու ներդաշնակման:

Ահա թէ ինչու համար այսօր կը ստնենք հայ գիրերու գիւտի 1500 եւ հայ ազգաբութեան 400 ամեակները միասին ու գիրկերդիտան: Այդ գիրկերդիտանումը ազգայինի ու միջազգայինի հայակապ միացումն է, ան որ ստեղծեց ու կերտեց մեր ազգային գոյութիւնն ու հայ գրականութիւնը:

Այս երկու յարեկանները ազգայինի ու միջազգայինի հրաշնագործ եղբայրութեան տօներն են, որոնք այսօրոն հայակապօրէն ու այսքան հանդիսաւորութեամբ կը հաստատեն պատմական ու տեսական այն մի՛մ ճշմարտութիւնը թէ ազգերը պէտք է որ դարձանան իրենց պատմական ինքնուրոյնութեամբ միջազգային անգամանին մէջ:

ՀՄ. ՄԱՆՈՒԿՅԱՆ